ԱՐԺԱՆԱՎՈՐ ՀԱՋՈՐԴԸ

Հայոց Եկեղեցու հովվապետների ընտրությունը դարեր ի վեր կարևոր իրադարձություն է հանդիսացել մեր ժողովրդի պատմության համար, նամանավանդ, երբ այն զուգադիպել է դարակազմիկ պատմական նշանակություն ունեցող քաղաքական իրադարձություններին: Այդպիսի ժամանակաշրջան է ներկայումս ապրում Հայաստան աշխարհը. միջազգային քաղաքական ծանր պայմաններում ժողովուրդը ոտքի է կանգնել և ազատ ու անկախ Հայրենիք է կերտում. ուժեղ ու բանիմաց աշխարհիկ իշխանություններին նեցուկ հանդիսացող իմաստուն և գործունյա հոգևոր առաջնորդներ են պետք. այս խնդրի քաջ գիտակցությունն էր պատճառ, որ ողջ հայությունը, թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, սրտատրոփ սպասում էր մեր Եկեղեցու նոր գահակալի ընտրություններին: Հարկ է նշել, որ երջանկահիշատակ Վազգեն Ա-ն իր 40-ամյա անբասիր ու ազգանվեր գործունեությամբ այնպիսի հեղինակություն ու սեր էր վայելում, որ թվում էր, անկարելի պիտի լիներ նրան արժանավոր փոխարինող ունենալ:

Անցան սպասումի վեց ամիսները. գումարվեց ազգային վեհաժողովը, և ընտրությունները բարեհաջող ավարտվեցին. 1995 թ. ապրիլի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կոչնակները ի լուր աշխարհի ազդարարեցին աստվածահաճո լուրը՝ Լուսավորչի գահի վրա բարձրացավ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, արժանավոր մի հոգևորական, որ իր երկարամյա հոգևոր գործունեության տարիներին արդեն իսկ իրեն դրսևորել է որպես հիրաշալի աստվածաբան, հայ դպրության քաջագիտակ, փառավոր բեմբասաց քարոզիչ, հմուտ կազմակերպիչ և բազում այլ բարեմասնությունների տեր անձնավորություն:

Սրտանց շնորհավորում ենք մեր նոր Վեհափառին, ցանկանում քաջառողջություն ու արևշատություն՝ ի փառս մեր ժողովրդի և Միացյալ ու Անկախ Հայրենիքի:

ԲԱԲԿԵՆ ՉՈՒԳԱՍԶՅԱՆ
Հայաստանի մշակույթի վաստակավոր մշակ